ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
15 ՄԱՐՏ 2021 N 26-Ա
ԻՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ և 44-րդ կետերով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի N1 միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի մարտի 4-ի N21/48 գրությունը և Իրինա Մարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի մարտի 15-ից Իրինա Մարգարյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի N1 միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 / հինգ/ տարի ժամկետով:

2. 2021 թվականի մարտի 15-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի N1 միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Իրինա

Մարգարյանին ազատել զբաղեցրած պաշտոնից, լուծել նրա հետ կնքած 2020 թվականի հունվարի 10-ի N431 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3/15/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ